

5.4. 2007թ. օգոստոս ամսվա շրջակա բնական միջավայրի աղտոտվածության մոնիթորինգ

Ըստ ՀՀ բնապահպանության նախարարության տեղեկատվության, հանրապետության շրջակա բնական միջավայրը 2007թ. օգոստոսին ունեցել է հետևյալ բնութագիրը.

Օդային ավազանի որակի մոնիթորինգ: Օգոստոսին հանրապետության մթնոլորտի աղտոտվածության որակի մոնիթորինգ իրականացվել է Երևան, Գյումրի, Վանաձոր, Հրազդան, Ալավերդի և Արարատ քաղաքներում տեղակայված 13 մշտական լաբորատոր դիտակայանների միջոցով:

Մթնոլորտային օդի 3942 փորձանմուշներում որոշվել են հիմնական աղտոտիչ նյութերի՝ փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի, ազոտի օքսիդի, բենզոլի, տոլուոլի, քսիլոլի, էթիլ բենզոլի, քլորոպրենի և գետնամերձ օզոնի պարունակությունները:

Մթնոլորտի աղտոտվածության որակի մոնիթորինգի անցկացման համար տեղակայված դիտակայանների և վերցված փորձանմուշների քանակական բաշխվածությունն ըստ քաղաքների, 2007թ. օգոստոս

(միավոր)

	Դիտակայանների քանակը	Փորձանմուշների քանակը
Երևան	5	2010
Արարատ	1	81
Ալավերդի	2	594
Վանաձոր	3	1107
Գյումրի	1	75
Հրազդան	1	75
Ընդամենը	13	3942

Երևան քաղաքում հուլիս ամսվա համեմատ գետնամերձ օզոնի միջին ամսական կոնցենտրացիան նվազել է 1.1 անգամ:

Վերահսկվող աղտոտիչների առավելագույն և միջին ամսական կոնցենտրացիաներն ու դրանց սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները (ՍԹԿ) ք.Երևանի մթնոլորտում, 2007թ. օգոստոս

(մգ/մ³)

Աղտոտիչ նյութերի անվանումը	Կոնցենտրացիաները		ՍԹԿ-ները	
	առավելագույն	միջին ամսական	միանվագ առավելագույն	միջին օրական
Փոշի	1.04	0.18	0.5	0.15
Ծծմբի երկօքսիդ	0.24	0.04	0.50	0.05
Ազոտի երկօքսիդ	0.329	0.096	0.085	0.04
Ազոտի օքսիդ	0.41	0.06	0.40	0.06
Գետնամերձ օզոն	0.187	0.057	0.16	0.03
Բենզոլ	0.314	0.002	1.5	0.1
Տոլուոլ	0.387	0.123	0.6	0.6
Քսիլոլ	0	0	0.2	0.2
Էթիլ բենզոլ	0	0	0.02	0.02
Քլորոպրեն	0	0	0.02	0.002

Գյումրի քաղաքում փոշու միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է 2.2 անգամ, իսկ միանվագ առավելագույն կոնցենտրացիան՝ 1.3 անգամ: Հուլիս ամսվա համեմատ փոշու միջին ամսական կոնցենտրացիայի էական փոփոխություն չի դիտվել:

Վանաձոր քաղաքում հուլիս ամսվա համեմատ որոշված նյութերի միջին ամսական կոնցենտրացիաների էական փոփոխություն չի դիտվել:

Վերահսկվող աղտոտիչների առավելագույն և միջին ամսական կոնցենտրացիաներն ու դրանց ՍԹԿ-ները ք.Վանաձորի մթնոլորտում, 2007թ. օգոստոս

(մգ/մ³)

Աղտոտիչ նյութերի անվանումը	Կոնցենտրացիաները		ՍԹԿ-ները	
	առավելագույն	միջին ամսական	միանվագ առավելագույն	միջին օրական
Փոշի	1.07	0.16	0.5	0.15
Ծծմբի երկօքսիդ	0.44	0.08	0.50	0.05
Ազոտի երկօքսիդ	0.177	0.052	0.085	0.04
Ազոտի օքսիդ	0.15	0.03	0.40	0.06
Բենզոլ	0.198	0.052	1.5	0.1
Տոլուոլ	0.844	0.212	0.6	0.6
Քսիլոլ	0	0	0.2	0.2
Էթիլ բենզոլ	0	0	0.02	0.02

Հրազդան քաղաքում ցեմենտի փոշու միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է 5.1 անգամ, իսկ միանվագ առավելագույն կոնցենտրացիան՝ 4.3 անգամ: Հուլիս ամսվա համեմատ ցեմենտի փոշու միջին ամսական կոնցենտրացիան բարձրացել է 1.3 անգամ, իսկ միանվագ առավելագույն կոնցենտրացիան՝ 1.7 անգամ:

Ալավերդի քաղաքում հուլիս ամսվա համեմատ ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան բարձրացել է 1.1 անգամ, ազոտի երկօքսիդինը՝ 1.2 անգամ:

Վերահսկվող աղտոտիչների առավելագույն և միջին ամսական կոնցենտրացիաներն ու դրանց ՍԹԿ-ները ք.Ալավերդու մթնոլորտում, 2007թ. օգոստոս

(մգ/մ³)

Աղտոտիչ նյութերի անվանումը	Կոնցենտրացիաները		ՍԹԿ-ները	
	առավելագույն	միջին ամսական	միանվագ առավելագույն	միջին օրական
Փոշի	-	0.14	0.5	0.15
Ծծմբի երկօքսիդ	0.90	0.59	0.50	0.05
Ազոտի երկօքսիդ	0.089	0.063	0.085	0.04
Ազոտի օքսիդ	0.07	0.04	0.40	0.06

Արարատ քաղաքում ցեմենտի փոշու միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է 4.9 անգամ, իսկ միանվագ առավելագույն կոնցենտրացիան՝ 4.4 անգամ: Հուլիս ամսվա համեմատ ցեմենտի փոշու միջին ամսական կոնցենտրացիայի էական փոփոխություն չի դիտվել:

Մակերևութային ջրերի որակի մոնիթորինգ: Օգոստոսին մակերևութային ջրերի նմուշառ կատարվել է հանրապետության 24 գետերի, Ախուրյանի, Ապարանի և Կեչուտի ջրամբարների, Երևանյան և Սևանա լճերի 84 դիտակետերից: Վերցվել է 93 փորձանմուշ, որոշվել է 20-22-ական ցուցանիշ: Դիտարկման արդյունքներն ըստ մակերևութային ջրերի վերահսկվող հատվածքների և աղտոտիչ նյութերի, ստացել են հետևյալ պատկերը.

Մակերևութային ջրերի աղտոտվածության վիճակը, 2007թ. օգոստոս

Ջրային օբյեկտի անվանումը	Դիտակետի համարը	Դիտակետը (հատվածքը)	ՍԹԿ-ն գերազանցող միացությունների կոնցենտրացիաները					
			լուծված թթվածին (ՍԹԿ՝ 6.0 մգ/լմ ³ -ից ոչ պակաս)	ԹԿՄ ₅ (ՍԹԿ՝ 3.0 մգ/լմ ³)	միտրիտ իոն (ՍԹԿ՝ 0.024 մգ/լմ ³)	անոնիում իոն (ՍԹԿ՝ 0.39 մգ/լմ ³)	սուլֆատ իոն (ՍԹԿ՝ 100.0 մգ/լմ ³)	հանքայնացում (ՍԹԿ՝ 1000.0 մգ/լմ ³)
Փամբակ	1	Հարթագյուղ գյուղից 0.5 կմ վերև	-	3.75	-	-	-	-
	2	Սպիտակ քաղաքից 0.5 կմ ներքև	-	-	0.044	-	-	-
	4	Վանաձոր քաղաքից 4.5 կմ ներքև	-	4.55	0.100	-	-	-
Դեբեդ	5	Մարցիգետի թափման կետից 0.5 կմ ներքև	-	4.39	0.240	-	-	-
	6	Այրում քաղաքից 0.5 կմ վերև	-	3.75	0.041	-	-	-
	7	ՀՀ պետական սահմանի մոտ	-	-	0.040	-	-	-
Ախթալա	14	Գետաբերան	-	3.50	-	0.50	903.0	1281.0
Արաքս	26	Հրազդան գետի թափման կետից վերև	5.30	5.40	0.062	0.66	111.9	-
	27	Հրազդան գետի թափման կետից ներքև	5.35	4.00	0.096	1.78	138.1	-
	28	Արմաշ գյուղից 0.5 կմ ներքև	-	3.70	0.048	-	122.2	-
	29	Ազարակ քաղաքից 2 կմ հարավ	-	3.90	-	-	107.2	-
	30	Ազարակ քաղաքից 2.5 կմ հարավ-արևելք	-	4.80	-	-	140.9	-
Ախուրյան	31	Ամասիա քաղաքից 0.5 կմ վերև	5.64	-	-	0.46	-	-
	32	Ամասիա քաղաքից 1 կմ ներքև	5.60	-	-	-	-	-
	34	Գյումրի քաղաքից 5 կմ ներքև	5.10	-	0.034	-	-	-
Կարկաչուն	38	Դարիքջանյան գյուղից 1 կմ ներքև	-	3.60	0.096	-	194.2	-
Սևջուր	40	Վաղարշապատ քաղաքից 10 կմ հարավ	-	3.40	0.046	1.26	128.7	-
	41	Վաղարշապատ քաղաքից 11 կմ հարավ-արևելք	-	3.60	0.082	-	194.2	-
	42	Ունչապար գյուղից 0.5 կմ ներքև	-	3.70	0.058	0.56	156.8	-
Քասախ	44	Ապարան քաղաքից 0.5 կմ ներքև	-	3.50	0.048	-	-	-
	47	Գետաբերան	-	3.40	0.038	-	194.2	-
	51	Գեղամավան գյուղի մոտ	-	4.30	-	-	-	-
Հրազդան	52	Քաղսի գյուղից 0.5 կմ ներքև	-	4.20	-	-	-	-
	53	Արգել գյուղից 0.5 կմ ներքև	5.50	-	0.026	-	-	-
	54	Արգնի ՀԷԿ-ից 0.5 կմ ներքև	-	4.10	-	-	-	-
	55	Դարբնիկ գյուղի մոտ	1.44	13.5	0.187	15.93	-	-
	56	Գետաբերան	4.94	4.04	0.120	0.78	147.4	-
	57	Հանքավան գյուղից 0.5 կմ վերև	-	4.20	-	-	-	-
Մարմարիկ	58	Գետաբերան	-	3.20	0.026	-	-	-
Գետառ	59	Գետաբերան	-	4.10	0.197	3.66	194.2	-
Վեդի	80	Ուրցաձոր գյուղից 0.5 կմ վերև	-	4.50	-	-	-	-
	82	Գետաբերան	-	-	-	-	116.6	-
Արփա	85	Վայք քաղաքից 0.5 կմ ներքև	-	3.50	0.031	-	-	-
	86	Եղեգնաձոր քաղաքից 0.5 կմ վերև	-	-	0.046	-	-	-
	87	Արենի գյուղից 0.5 կմ ներքև	-	-	0.034	-	-	-
Եղեգիս	88	Շատին գյուղից 0.5 կմ ներքև	-	-	-	-	140.9	-
Ողջի	91	Քաջարան քաղաքից 1.7 կմ վերև	-	3.60	-	-	116.6	-
	92	Քաջարան քաղաքից 1.8 կմ ներքև	-	-	0.130	-	131.5	-
	94	Կապան քաղաքից 6.8 կմ ներքև	-	-	0.046	-	127.8	-
Արժվանիկ	96	Գետաբերան	-	-	0.036	-	290.4	-
Որոտան	101	Սիսիան քաղաքից 2 կմ ներքև	-	-	0.106	-	-	-
	102	Տաթև ՀԷԿ գյուղից 0.5 կմ ներքև	-	-	0.053	-	-	-
Գորիսգետ	106	Գորիս քաղաքից 3 կմ վերև	-	5.00	-	-	-	-
	107	Գորիս քաղաքից 1.5 կմ ներքև	-	-	0.106	1.16	-	-

5.ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

Ջրային օբյեկտի անվանումը	Դիտակետի համարը	Դիտակետը (հատվածքը)	ՍԹԿ-ն գերազանցող միացությունների կոնցենտրացիաները					
			լուծված թթվածին (ՍԹԿ՝ 6.0 մգ/լմ ³ -ից ոչ պակաս)	թեղի (ՍԹԿ՝ 3.0 մգ/լմ ³)	միտրիտ իոն (ՍԹԿ՝ 0.024 մգN/լմ ³)	ամոնիում իոն (ՍԹԿ՝ 0.39 մգN/լմ ³)	սուլֆատ իոն (ՍԹԿ՝ 100.0 մգ/լմ ³)	հանքայնացում (ՍԹԿ՝ 1000.0 մգ/լմ ³)
Ապարանի ջրամբար	111	Ամբարտակի մոտ	-	5.30	-	-	-	-
Երևանյան լիճ	112	Ամբարտակից գետի հոսանքով ներքև	-	-	0.101	0.53	-	-
Կեչուտի ջրամբար	114	Ամբարտակի մոտ	-	4.60	-	-	-	-